

Աճառյանի “Արմատական բառարանին”, կարդում ենք՝ ելք, հնարք, համփա, անցք, բացվածք: Իսկ անհուն² անվերջի իմաստով Ունջ արմատն ըստ Հ.Աճառյանի խորք է նշանակում: Այսպիսով, ծագումնաբանական իմաստով կասկած չի մնում, որ հուլիցը նույնպես հայերեն բառ է: Բերված այս բոլոր իմաստները շատ բանաստեղծականորեն գալիս ու միաձուլվում են Քարահունջ անվան մեջ որպես հազարամյակների խորքից հնչող, խոսող, կանչող քարեր, ելք՝ դեպի անհունը մարդկային հնարքով, կոչ՝ դեպի նոր հնարքների համփան: Մտածելու բան է:

ՍԹՈՈՒՆՀԵՆՋ

Այսպես է կոչվում Անգլիայում գտնվող հանրահայտ հուշարձանը [3], որը ըստ անգլիացի գիտնականների, 4000 տարեկան է, սակայն նրանք ասում են, որ իրենց հայտնի չի, թե ովքեր են այն կառուցել, քանի որ, իրենց ասելով, դա բերված կուլտուրա է, բայց իրենց հայտնի չի, թե ում կողմից է բերված: Կառույցը հսկա քարերից է, բայց քարերն անցքեր չունեն: Ակնհերե է, որ Անգլիայում գտնվող հուշարձանի անվանումը իդենտիկ է մեր Քարահունջին: Սթոուն նշանակում է քար, իսկ հենջ՝ բառ անգլերենում չկա: Սակայն այս հենջ-ը շատ նման է հուլից-ին: Հենջ-հուլից-հուլից — նույն բառն է, որը կարող է հազարամյակների ընթացքում մի քիչ փոփոխվել: Այսպիսով, Սթոունհենջը նույն Քարահունջն է:

ՔԱԼԵՆԻՇ

Շոտլանդիայի հյուսիսեւերեմուտքում, Գեբրիդյան կղզիներից մեկի վրա Քարահունջը հիշեցնող հուշարձան կա, բայց ավելի փոքր է, կոչվում է Քալենիշ: Նորից դիմենք հնչյունաբանությունը: Հայտնի է, որ լիդյու, հնչյունները նույնն են համարվում: Այսպիսով, Քալենիշ բառի առաջին արմատը նույն է, եթե նշենք, որ գլխի տառերն էլ միևնույն հնչյունն են արտահայտում, իսկ ինչ արմատը, կամ բառը նույնպես հայերեն է, — նիշ, նշան: Այսինքն Քալենիշը կարող ենք կարգալ Քարենիշ, որն, ըստ ամենայնի, նույնն է ինչ որ է Քարահունջը, որովհետեւ կառույցներն են նման:

ՔԱՐՆԱԿ

Ֆրանսիայի հյուսիսեւերեմուտքում, Բրետանում նույնպես կան շատ կանգնած քարեր, (թվագրվում են մ.թ.ա. 1876 թ.), որոնք, ինչպես — մոտակայքում գտնվող քաղաքը, կոչվում են Քարնակ: Բրետոներեն Քարնակը Քարնիխ է, ինչը վերը վերծանված Քարենիշն է, կամ Քարնիշը: Նույն անունն է կրում Եգիպտոսում գտնվող Ամոն-Րա-ի հսկա տաճարը — Եգիպտոսի հնագույն աստղադիտարանը այժմյան Ասուան քաղաքի մոտ:

ԿԱԼԱԿՈՉԱ

Կենտրոնական Ամերիկայի Անգերում, Տիտիկակա լճի ավազանում մի հինավուրց հուշարձան կա, որը բաղկացած է չրջան կազմող մեծ քարերից: Ենթադրում են, որ այն եղել է կրոնական-աստղագիտական կենտրոն: Ամերիկյան հնդկացիների այժմյա լեզվով այն կոչվում է Կալակոչա: Այս անվանումն էլ է հայերեն կարգացվում: Կալեւալ-ն, ինչպես ասվեց, քար-ն է, կոչա-ն — կոչ, այսինքն, Կալակոչան եւս մի քարահունջ է:

ՎԻՐԱԿՈՉԱ

Նույն Տիտիկակա լճի ավազանում է գտնվում ծովով Անգեր եկած Վիրակոչա աստծուն նվիրված մեծ համալիր-հուշարձանը: Ցանկալի կլինի իմանալ, թե Անգեր անվանումը ո՞ր լեզվով է — ի՞նչ է նշանակում: Գուցե էլի հայերեն են անվանել այդ սարերը. ա՞նդ, անդի՞ն, ա՞նդի, ասել է թե երկրագնդի հակառակ կողմում գտնվող տե՞ղ:

Հազարամյակներ առաջ (ըստ Գ. Հենքոքի 15 հազար տարի առաջ) Կենտրոնական Ամերիկայի Անգերում գտնվող Տիտիկակա լճի ավազանում ապրում էին տարբեր ժողովուրդներ, որոնք նախքան ինկերի-աստեկների գերիշխանությունը ունեցել են իրենց լեզուները, ստեղծել են լեզենդներ իրենց անցյալի մասին: Այդ ժողովուրդների լեզենդները համընկնում են բովանդակությամբ: Լեզենդներում պատմվում է, որ շատ վաղուց իրենց երկիր ծովով եկան սպիտակամորթ մարդիկ: Ծովով երթեւեկելն արդեն հրաշք էր բնիկների համար: Բայց բուն հրաշքն այն էր, որ եկողները սովորեցրին բնիկներին ձուլագործություն, շինարարություն եւ այլ արհեստներ, պատվիրեցին հավատալ Արդար Արեգակին, չգոհաբերել աստվածներին մարդկային կյանքը, ապրել մի ընտանիքով եւ այլն: Այդ մարդիկ չիլահեր էին, կապտաշյա, ունեին ալիքավոր ընչացք ու մորուք, այսինքն արտաքինով տարբերվում էին բնիկներից: Տարիներ հետո նրանք հեռացան (էլի ծովով), ու դրանից հետո հնդկացիները սպասում են իրենց ուսուցիչների վերադարձին: Իսկ եկողների ղեկավարին, որին Վիրակոչա էին անվանում, պաշտում էին որպես աստված: Վիրակոչայի արձանը եւս տեսել եմ հեռուստատեսությունում ու համաձայն եմ ուսուցիչիս Պ. Լյուբիմցեվի հետ, որն ասաց. “Ուշագրություն դարձրեք Վիրակոչայի ալիքավոր ընչացք ու մորուքին, — այն հանգամանքին, որ նրա աչքերը բոլորովին չեղ չեն:” Հատկանշներ, որոնք բնորոշ են արմենոյիդ ռասային: Կարելի է ենթադրել, որ եկվորները բացի գիտելիքներից ու հմտություններից տեղաբնակների լեզուներում էլ ինչեւոր հետք են թողել:

Եթե փորձենք Վիրակոչա անունը հայերեն կարգալ, կստացվի Ի Վերուստ Կոչված:

Տարբեր ժողովուրդների լեզենդներում Վիրակոչային անվանում էին նաեւ Պաչական, Պաչաքամակ:

ԿԱԼԱՍԱՍԱՅԱ

Վիրակոչայի արձանը կանգնեցված է մի մեծ հրապարակում, որի չափերն են 150x150 մ: Հրապարակը կոչվում է Կալասասայա: Այժմյա հնդկացիների լեզվով այս բառը նշանակում է” կանգնած քարեր”[3]: Դարձյալ ունենք կալ-բալ — սասայա արմատը, որն այժմյաբեն նշանակում է կանգնած: Հայերենում կան Սասուն, անասան բառերը: Հիշենք “Սասունցի Դավիթ” էպոսում Սանասարն ու Բաղդասարը խնդրում են դաշտում աշխատող ծեր հողագործին անուն տալ իրենց նորակառույց բերդաքաղաքին, տանը, որն իրենք կառուցել էին անհելի մեծ քարերով: Երբ ծերունուն գրկած պտուկներում են կառույցի ցանկապատի շուրջը, նա հրացած ու զարմացած ասում է, որ սա Սասունն է: Անկասկած, Սասուն նշանակում է կանգուն կառույց մեծ քարերից: Այլ կերպ ասած, Կալասասայա: Ուրեմն սասայա արմատն էլ է հայերեն ստուգաբանվում:

Ամփոփելով այս 7 բառերի լեզվաբանական վերլուծությունը, մենք հաստատում ենք ակադեմիկոս Պ. Հերոնու հողվածներում արտահայտված այն միտքը, որ հայերն անհիշելի ժամանակներից չրջել են աշխարհը ցամաքով ու ծովով, տարածել են իրենց գիտելիքներն ու հմտությունները, ազնիվ մղունները, ի բնի լինելով շինարար, գիտնական, ուսուցիչ, դոնոր: Ոչինչ չեն քանդել, չեն տիրապետել, որ իշխեն, այլ կառուցել են աստղադիտարաններ, Ար-ի տաճարներ, փառաբանելով ու իրենց աղոթքն ուղղելով Արդար Արեգակին [4]: Ի դեպ, մեր քրիստոնեական տաճարներն էլ կառուցված են այնպիսի ճարտարապետական հարանքով, որ Արեւի շողքը օրագիշերահավասարին կամ արեւադարձի հաշվարկված օրերին ընկնում է ուղիղ բեմի սեղանին տեղավորված ոսկուց կամ արծաթից

պատրաստված ճաճանչազարդ ու ճաճանչափայլ Արեւ ը պատկերող սկավառակներին, իմաց անելով օրացույցի կարգը: Ծիշտ այնպես, ինչպես Հազարամյակներ ի վեր արել են արիացի հայերը:

Այսպիսով, եթե մի կողմ դենք որոշ հնչյունափոխություններ, այս անվանումների նմանությունն, ըստ ամենայնի, պատահական չի, որովհետեւ կառույցներն էլ, ըստ գիտնականների գրածի, նման են իրար ու ծառայել են միեւնույն նպատակին:

Ինչպես վերը ասվեց, ըստ Գ. Հենքոբի, այդ լեզվները ունեն անդյան շատ ժողովուրդներ:

Այժմարան այդ ժողովուրդներից մեկն է: Այժմ էլ այժմարներն ապրում են Անդյան բարձրավանդակի կենտրոնական մասում գտնվող պետություններում. Բոլիվիայում, Պերուում եւ Չիլիում: Այսօր այժմարների թիվը 1 միլիոն 600 հազար է: Բոլիվիայում եւ Պերուում այժմարները իսպաներենի կողքին հուշակված է պետական լեզու: Ցավոք, այսօր ոչ բոլոր այժմարներն են կարողանում խոսել իրենց մայրենիով, բայց պնդում են, որ շարունակում են իրենց այժմարներ համարել:

Որոշ գիտնականներ գտնում են, որ այժմարներն աշխարհի ամենահին լեզուներն են:

Հետաքրքրությունը աստղադիտարանների անվանումները հայերեն վերծանելու նկատմամբ ստիպեց մեզ դիմել հայերենի եւ այժմարների համեմատական ուսումնասիրությանը:

Պրպտելով անգլերեն-այժմարներ ընդամենը 600 բառանոց բառարանը [6], մենք գտանք մի ամբողջ շարք այժմարներ բառեր, որոնց արմատների համեմատական ուսումնասիրությունը համապատասխան հայ բառարանների հետ բացահայտեց նրանց ֆոնետիկական եւ իմաստային նմանությունը:

Նման պնդումը լիքավոր դարձնելու համար, անշուշտ, անհրաժեշտ է այժմարներն ուսումնասիրել լեզվաբանական առումով, ձեռք բերել եւ մանրամասն գնահատել շաղկապված տեքստերում լեզվի շարահյուսության կանոնները, ինչպես Պ. Ֆլորենսկին է ասում, գտնել բառերն իրար կապակցող ձգողական ուժերը: Մտադիր ենք օգնություն խնդրել այժմարներին տիրապետող գիտնականներից պարզաբանելու համար, թե մեր ընտրած բառերից ծագումնաբանական առումով որ բառերն են ստույգ բուն այժմարներն եւ որոնք կարող են լինել ենթադրյալ փոխառությունները: Այս հոգվածում մենք առաջիմ բերում ենք այն լեզվական համընկնումները հայերենի հետ, որոնք նման են իրար եւ ֆոնետիկ կարգով, եւ իմաստի անալոգիաներով:

Պարզ է, որ այս կարգի ուսումնասիրության նպատակը գուցե լեզվաբանական չի: Եթե մեզ հաջողվի ապացուցել, որ այժմարներում կան շատ հին ժամանակներից (15 հազար տարի առաջ) պահպանված գոնե մեկ-երկու-երեք տասնյակ հայարմատ բառեր, ուրեմն կարելի կլինի խոսել այն մասին, որ դեռ այդ ժամանակներում հայերը ծովով ու ցամաքով գնացել են աշխարհի տարբեր ծայրերը, այդ թվում Կենտրոնական Ամերիկա, կապեր են ստեղծել, թողել են իրենցից հետո բարի հիշատակ ու շուայրեն տարածել են իրենց պատկանող ձուլագործության, շինարարության եւ այլ հմտությունների գաղտնիքները:

Այսպիսով, ընթերցողի դատին ենք հանձնում մեր դատողությունները յուրաքանչյուր առանձին գույգ բառի մասին:

Սկսենք աշխարհի ամենակարեւոր բառից:

Sira այժմարներն բառը թարգմանվում է սեր, ինչպես հայերենում է:

Անցնենք բնության ու աստվածներին:

Warawara այժմարներն նշանակում է աստղ: Հնչողությամբ նման է մեր վառ բառին, իսկ իմաստն այն է, որ աստղերն իրոք վառ են:

Qala նշանակում է քար: Այս հայերեն բառը “ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում” իր գոյացումներով գրավում է 7 էջ: Պետք է ասել, որ նա աշխարհն էլ է գրավել, այդ պատճառով այժմարներումն էլ է նույնը:

Qarqa նշանակում է ժայռ, թարգմանության իմաստով գալիս է ապացուցելու նախորդ պնդումը:

Uma — ջուր է նշանակում: Հայերենն ունի ումպ, կում — խում արմատները: Երկու լեզուներումն էլ ակներ- է ում արմատը:

Lallawa նշանակում է հոյակապ:

Wak'a նշանակում է երկրպագության վայր: Այնտեղ հաստատ վախ կա:

Ուտելիքին վերաբերող բառեր:

Chira նշանակում է սերմ: Պատկերացնենք հետեւյալ տրամաբանական շարքը. պտուղ — չիր — սերմ: Արդյո՞ք օրինաչափ է:

Qita նշանակում է սերմաջուր, այսինքն սպերմա: Այժմարները բացարձակ իդենտիկ է հայերենին, այսինքն կիթ բառին (հայերենում ունենք ձկնկիթ, հավկիթ):

K'awna, ճիշտ է, այժմարներում ձու է նշանակում, բայց նման է մեր հավին, եթե արմատը awn — ն է:

Khutuna նշանակում է աղանձ, իսկ բառի արմատը համընկնում է հայերեն կուտ բառի հետ: Աղանձն էլ կուտից, այսինքն հատիկից են պատրաստում:

Կենդանիներ:

Phisi — նշանակում է կատու, կարծում ենք, մեկնաբանության կարիք չկա:

Chiwchi նշանակում է հավի ճուտ, իսկ հայերեն ասում ենք հավ ու ճիվ: Ակներեւ է, որ այս բառը գոյացել է միջարկությունից: Հայերեն ասում ենք, որ ճուտիկները ճիվ-ճիվ են անում:

Khuchi նշանակում է խոզ: Հայերենում ունենք գոջի բառը: Կարծում ենք, որ այս դեպքում էլ մեկնաբանության կարիք չկա:

Համեմատենք մի քանի այլ բառեր

Tapa նշանակում է բուն: Հայերենում ունենք տապան բառը, որը նշանակում է. արկղածեւ մեծ կամ փոքր շինվածք, կառույց: Նոյի տապան. դագաղ. շիրիմ (տապանաքար): Կա նաեւ տափել բայը, որը նշանակում է մի հարմար տեղում պատսպարվել:

Tunu նշանակում է ծառի բուն:

Laqa նշանակում է հող, փոշի, իսկ Հայերենում ունենք նույն հնչողությամբ լաֆա բառը, որը նշանակում է որեւէ բանի կամ նաեւ փոշու հետք շորի կամ որեւէ իրի վրա:

Paya նշանակում է երկու ու շատ նման է փայ բառին, օրինակ, եղածը բաժանել երկուսի միջեւ:

Ari նշանակում է սուր, որից ակամա կապ է ծագում Հայերենի արի ածականի հետ:

K'ari նշանակում է սուտ : Սուտը չարիք է կամ չար —իցն է (կ-չ հնչյունափոխությամբ):

K'umu այմարերեն նշանակում է կամար: Աճառյանի բառարանում կա կումբ, որը նշանակում է վահանի մեջտեղի ուռած մասը, այստեղից՝ կմբթայ, կմբավոր ու նշված է, որ Պ. Դ. Լազարդի, “Gesammelte Abhandlungen” աշխատության մեջ, Leipzig, 1866 կա նաեւ կամար նշանակությունը: Եթե այս վերջինը չասեինք էլ, կարծում ենք, գմբեթն էլ կամարածեւ է Kumri այմարերեն նշանակում է ծիածան: Իսկ ո՞վ գիտե, ի՞նչ է նշանակում մեր Գյումրի-Կումայրին: Կարելի է դատողություններն սկսել նրանից, որ Գյումրին գտնվում է գմբեթածեւ բարձրավանդակի վրա, ասել է թե՛ կամարին: Իսկ եթե բառը փորձենք տրոհել, կստացվեն կում եւ այր-ար արմատները: Այսինքն Ար-ի կամա՞ր - այն է ծիածան: Ո՞րեմն ինչի՞ հասանք: Հասանք այն մտքին, որ այմարերենի հիշողությունն օգտագործելով կարողացանք վերծանել այս վերջին երկու Հայերեն բառերի մոտացված նշանակությունները: Կում արմատը Հայերենում տվյալ իմաստով որոշակիորեն կամ-ի է վերածվել (կամար), իսկ Կումայրի-Գյումրի հնագույն հայկական քաղաքի անվանման վերծանումն այսօր չկա ոչ մի բառարանում: Ե՛վ ի՞նչ պայծառ անուն է, ծիածանափայլ:

Ikina — քնել: Արմատներն են. Kin — kn — քն :

Phusana - փչել : Արմատն է phus - փչել չ-ս հնչյունափոխությամբ, գոյացել է ձայնարկությունից:

Որոշ բայեր

Achuna նշանակում է հասունացնել: Հայերենում ունենք աշուն, ժամանակ, երբ հասունանում են պտուղները եւ հասուն. եւ հնչում է միանման, եւ արմատն է բնդհանուր, եւ իմաստն է նույնը:

Arkana նշանակում է հետեւել: Հայերեն արկանել նետել, ձգել. դնել, մտցնել. տարածել, փռել, սփռել. հանել, զրկել եւ այլն: Անշուշտ, արկան - օղապարան բառը, որն այսօր միջազգային բառ է, ենթադրում է օղապարանով որսին կամ թշնամուն հետեւել, հետապնդելու նաեւ բանտարկելու իմաստը: Այս բայը նույնպես շատ գոյացումներ ունի ու ծավալուն տեղ է գրավում Աճառյանի արմատական բառարանում :

Apaqana — մեր ձեռքի տակ եղած բառարանում այս բառը թարգմանվում է տեղափոխվել, իսկ Գ .Հենքոբի “Աստվածների հետքը” գրքում բերված է այդ նույն բառի վատ տեղ իմաստը: Մնում է Հայերեն ավելացնել ապակնված տեղ, ինչին իդենտիկ է բերված այմարերեն բառը:

Imana նշանակում է թաքնվել: Այստեղ այմարերենում պահպանվել է Հայերենի տրամաբանական շարքի վերջին օղակը: Թաֆնվել-փնտրել-տեղն իմանալ: Այս ենթադրությունը հաստատվում է հաջորդ բառի թարգմանությամբ, ուր ինչպես եւ այստեղ, տեղի է ունեցել տրամաբանական շարքի խախտում:

Thaqana նշանակում է փնտրել: Հայերենում թաֆնվել բառն է նման բերված այմարերեն բառին իր հնչեցմամբ, իսկ իմաստը տրամաբանական շարքում մի քայլ առաջ է՝ նախ հարկավոր է թաֆնվել, որ հետո փնտրեն:

Amtana նշանակում է հիշել: Հայերեն մտ — միտ արմատն է, այստեղից՝ մտնում պահել, հիշել խտացումը:

Այո, այմարերենը իր հիշողության մեջ պահել է երբեմնի ներմուծված հայկական տարրը: Ձի գրվել ու մեզ չի հասել վաղնջական ժամանակներին վերաբերող մեր պատմությունը, սակայն վկայությունները մնացել են հեռավոր երկրի աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկի լեզվի հիշողության մեջ: Այմարա լեզվի հիշողությունն է, որը կարող է պատմական փաստեր վերծանել, օգնել փնտրելու հայկական հետքը Կենտրոնական Ամերիկայի ժողովուրդների պատմության մեջ որպես վկայություն հին Հայերի տեղափոխումների առաքելության, նրանց գիտելիքների ու առաքելության մասին Կենտրոնական Ամերիկայում ու ամբողջ աշխարհում:

Այս առումով անչափ հետաքրքիր կլինեն պետականորեն խրախուսվող երկարատեւ, մանրամասն ուսումնասիրություն կատարել, համեմատելով Տիտիկակա լճի ավազանում ապրող այմարների լեզուն հայերենի հետ: